ցաւ ՚ի կողմնէ Մէհ. Կաթուղիկոսի: ուստի փութաց երթալ իւր պաշտօնը կատարել ըստ ծիսի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Նոյ. 27 — Ըստ խնդրագրութեան Հայ հասարակութեան Բանաքեռ գեղջ՝ և ըստ յայտարարութեան փոխ — թեմակալին Երևանայ, Ազգասէր Պ. Վախտանգն Փարսադանեանց՝ վերյիշեալ գեղջ հոգևոր դպրոցին վերատեսուչ կարգեցաւ հրամանաւ Վեհափառ Հայրապետի:

---

## ԿՐՕՆԱԿԱՆ

### ԱՆԸՆԴՀԱՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Առաքելական յաջորդութեան ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց:

(Շարունակութիւն. տես. երես 86)

### Ահաւասիկ խիստ մաշուած հին մագաղաթեայ երեք թերթերուն պարունակութեան ամբողջ օրինակը:

Յիշկրութիք եպիսկոպոսաց Առքլն (առաքելական) վիճակիս Արտազու, զոր գտաք ՚ի հին Յիշտկրնէ (յիշատակարանէ) միոջ, որ էր գրեալ, ղը, Թուական Հայոց: ձեռամբ Յօհաննէս սպասաւորէ, ՚ի սուրբ ուխտէն Մաղարթայ, այսպէս: Յաջորդք Առաքելական վիճակիս Արտազու և հրաշագործ սուրբ շիրմիս Առաքելոյն Թադէոսի, այն որ զԱբգար բրպշտ (բարեպաշտ) Թգւլն մեր բժշկեաց Յուռհայ: և եթող անդ եպս (եպիսկոպոս) ոմն խոյրարար Արջայի, որ Թադդէ (ադդէ) կոչի, և անտի եկն ՚ի գաւառս Ճուարշան քղք (քաղաք) Հայաստանի, յամս Սանատրուկ Թգւրի Արշակունեաց: և լուսաւորեաց անդ Աւետարանական լուսով զհաւատացեալս և ձեռնադրեաց Զաքարիա Աշակերտն իւր եպս քղքին: և ինքն գնաց յայլ կողմունս աշխարհին աշակերտելոյ զամենայն հեթանոսս: Այս Զաքարիա ասի լինել նահտկել (նահատակեալ) յԵրուանդ Արքայէ Հայոց, զկնի խէ, ամ՝ համբառնալոյ Փրկչին: և յետ սորբոյն կարգեցին եպս Զեմենոս. սա իբր է, ամ հովուեաց հաւատացեալսն Քսի և վախճանեցաւ: Ապա Ատրներսեհ եպս. սա յետ կռվըլոյ (կառավարելոյ) զժողովուրդս, ժե, ամ, նահատակեցաւ ՚ի բարբարոսաց: սորա յաջորդեաց Մուշէ, կամ Մուշեղ եպս յերկրէն Պարսից. սա յետ կռվըլոյ զժողովս մեց ՚ի Թաքստեան, իբր ը ամ վճարեաց զկեանս իւր: "Ճաշէն եպս, ամն իե" (1): սորին յջրդ (յաջորդ) յշտկի (յիշատակի) ուրոյն Ճուարշ անուն եպս Աղուանից, որ իբր ի, ամ կռվրել է զհաւտն (զհօտն) Արտազու: և յետ սորին, Ղևոնդիոս եպս,

---

1) Չակերտներով նշանակեալ այս "Ճաշէն Եպս ամն իե", լուսանցը գրուած էր առջևը երկու գծով. Բայց թանաքը բաց էր Թէպէտ գիրը մի և նոյն.

եկաց Տէր զամս ժէ, սա 'ի ժմնկս (ժամանակս) Աւրելիանի կայսեր Հռոմայ, և Աղարշու թգւրի Հայոց, նհտակցու (նահատակեցաւ) 'ի Ծաւարշան տեղւոջն: Զկնի սորին չկարացաք գտանել, թէ ոյք յաջորդեալ են, 'ի տեսչութի եկեղեցւոյ, Առաքելն վիճակիս Արտազու, Այլ ասի թէ 'ի ժամանակս սորայն Գրիգորի պարթևի, լեալ իցէ քրիստոնէութի ընդ նմին և տեսուչ եկղեցւոյ: 'ի թաքուն և 'ի խաւարչուտ տեղւոջ: Բայց 'ի լուսաւորութէն Տրդատայ մեծի արքայի Հայոց, և բովանդակ լուսաւորութե տանս Թորգոմայ, որ եղև Առաքելաջան քարոզութե սբյն Գրիգորի, որքան որ կարողացաք գտանել 'ի հին գրուցաբութէ և Արձանագրաց անտի հաքելով, մի առ մի գիտցուք աստ; և դու ըն"գալ և" շատասէր ով հանդիպող, և յիշեա զմեղապարտ ոգի Յոհաննէսս, սպասաւոր բանին; զի բազում աշխատ եղէ զի գտանիցեմ զժմնկգրկն թվն: Այլ որքան գտաք գործակցութե Հոգւոյն, նշանակեսցուք: Արդ յետ լուսաւորութե Աշխարհիս Հայոցոր եղև 'ի ձեռն սբյն Գրիգորի Հովուապետութե. կարգեաց զբոլոր Հայաստան աշխարհս Առաջնորդ և տեսուչ հուտացյց. հրամանաւ քաջին Տրդատայ Արքային Հայոց բարեպաշտի, յայնժամ ասի թէ ըստ խնդրանաց եկեղեցւոյն Աղուբիոս անուն ոմն ձեռնադրեաց Եպիսկոպոս, առաքելական վիճակին Արտազու: սա կացեալ է եպսուէն անդ ամս իէ: Զկնի սորին կրգել է եկեղեցին Դանիէլ անուն ոմն Եպիսկոպոս. սա կացեալ է յամս ժը: յետ սորա Արթանէս եպիսկոպոս յամս զ: Ստեփան եպս, յամս1): Խորայէլ եպս յամս: Թադէոս եպս. սա կացել յամս լ: Ներսէհ եպս. զսմանէ ասեն թէ, գլխացեալ է յԱղուանս քարոզութեան. 'ի ժմնկս արխական պատերազմն սբց Վարդանանց: և յետ նր կարգել են եպս. վիճակիս զՄկրտիչ Բարեբարոն Մինեաց, որ հովուեաց զեկեղեցին, զամս իը: Գրիգոր եպս Նահատակ, զամս ժզ: Սահան եպս. զամս : Յակոբ եպս, զամս : Սամուէլ եպս, զամս : Ապա զկնի սորին Բարդուղիմէոս եպս, որ 'ի ժմնկս նորոգութեան Հայ. Թուականին հասեալ է: Բայց'ի սոցանէ չկարացաք գըտանել ասէ հուքղն յշտկգրութէս, թէ ոյք, և զո ոք կրգել եղև տեսուչ յայսմ վիճակիս: յղգս կործանման և աւերման քաղաքիս և վանուցս, 'ի ձեռս բռնաւորաց և շարժից:

Այնպէս և մեք զբզմս աշխատեցաք բայց չկարողացաք գտանել: ուստի կըրկին նորոգեցաք բազում աշխատութե մե ուխտս, թվին չհը: Արդ յիշեցէք 'ի մաքրափայլ յաղաւթս ձեր ով ընթերցաւղք զվերոյիշեալ Յոհաննէս վրդպետն զհուքողն այսմ շրկրգութէս ընդ նմին ըս-

1) Այսպէս մի քանիներուն առջևը, յամս, դըրուած, բայց թիւ գրուած չէ. այսինքն որքան ժամանակ եպիսկոպոսութիւն կամ առաջնորդութիւն ըրեր են, ինչպէս արդ ընթերցողք օրինակէս կը տեսնեն.

պաստուրս մէջ Առաքելոյն չէրմի, և իբր գէտս Արտազու գաւառին Օշաքարիա: գրեցաւ Թվին, չհթ.

Աղեգտաք յայլ պատմութին մի հնագոյն և անվերծանելի. զոր շինէր անցուցեալ էր 'ի գիր յաջորդութի մէ Առաքելոյն, Թադէոսի 'ի Կեսարիոյ Կապադովկացոց վիճակին, 'ի Թէոփիլոսէ Աշակերտէ Առաքելոյն. գրէլ հանդերձ ժամկգրութե. և անուն նորին Ստեփաննոս Տարաւնացի, որ էր աշկրտ մէջն Մեսրովպայ. Սուտի մեծաւ փոփոխոք և բզմ տաժանմամբ գաղփարեցի. զի մի կորիցէ իսպառ. Բանզի ոչ էի գիպեալ ուրեք մատենի. վա որոյ ուքան մարթացաք հանել 'ի լոյս, 'ի մատենէ անտի համառօտիւ կարգեսցուք, աստ ցաճն Գրիգոր Լուսաւորիչ. և անտի մինչև ցաճն Բարսեղ Կեսարցի.

Յետ Աւետրնկն քարոզութեանց մբ Առաքելոյն և Առաջին լուսատուին մերոյ Թադէոսի, ազդմամբ մբ Հոգւոյն, 'ի վերին Հայաստանէ եհաս 'ի քղքն Կապադովկացւոց Հայաստան աշխարհի, և քարոզեաց անդ Աւետարանն Քսի, և արար բզւմ (բազում) սքանչելիս, և եԹող անդ աշակերտն իւր, Թէոփիլոս, կարգելով եպս յայնմ վիճակին, որ Անտիոքացի յորջորջէր: Նա սա գրեաց ասեն մէն Ղուկաս, զաւետարանն և Գծպրակս Առաքելոցն. Եւ ինքն Առաքեալն դարձաւ վերստին 'ի վերին Հայս. և Թէոփիլոս զինի Ս բոյ պետին իւրոյ Թադէի, եկաց անդ Կեսարիա իբր յամս, իէ: ուր բարուք կովրելով զԵկեղեցին Քրիստոսի, փոխեցաւ յաստեացս: Սորա աշակերտ և յաջորդ եկաց Երուանդ Եպս 'ի նահանգէն գամրաց. ասեն զմանէ թէ լեալ է բ. գ (երկրորդ) Եպս Կապուտկացւոց աշխարհին. Սա և իբր ժդ ամ հովուելով զեկեղեցին, վճարեաց զկեանս իւր: Սորին յաջորդ եկաց Միւքիանոս եպս 'ի նոյն նահանգէն Կեսարիոյ, որ բզմ սքանչելիս առնէր, սա յետ հովուելոյ զԵկեղեցին, յամս, վճարեաց զկեանս իւր բարի մահուամբ: Սորա յաջորդեաց Մեհրեան, կամ Միհրան եպս որ էր քղքւ (քաղաքաւ) Եդեսացի, սա կովրել (կառավարեալ) զեկեղեցին, իբր յամս, ժգ: Ապա Ադրիկոս եպս, իէ, ամ, սա նհտկել (նահատակեալ) եղև յերկիրն իւր Սեբաստիոյ, վա 'ի Քս հւոյն (հաւատոյն): Ապա զկնի սորա Սլաւիոս եպս, յամս. Կովրեց (կառավարեաց) զհւտցեալս (զհաւատացեալս) 'ի կեսարիա. յետ սր (սորա) Սահան եպս, յամս, ժէ. Նորին յաջորդ Ալփիանոս եպս, յամս. Ապա Մեհրուժան եպս, որ կովրեց զեկեղեցին Քսի, յամս իե. (Պենտանոս, որոյ յաջորդ Աղեքսանդրոսն, յիշէ տես Եւսեբի, պատմ Եկեղեցւոյ, Զ. գլ. ժդ. 1) Սր (սորա) յաջորդ եկաց Աղեքսանդր Եպս որ ազդմամբ մբ Հոգւոյն գնաց յԵրուսաղէմ, և անդ

1) Փոխագրիչներու նշանակածներս (Պենտանոս և այլն) լուսանցը գրուած էր օտար գրչով և նորագիր.

կառավարեաց հաւատացեալն Բսի, փոխանակ ծերոյն Նարկեսոսի եպսապետի։ ով և ուսուցանէ քեզ Եւսիբէ ։ Սա իբր Ժ , ամ , կալրեց կորցուց ( կեսարացւոց) եկղեցին , զկնի որ, Մաքեղայոս եպս յամս , յետ որ , յաջորդեաց Պարմէլիանոս եպս, որ և արար զպատմութս ( զպատմութիւնս ) ։ եկեղեցւոյն, և մեծի Կյուրովա Թղթերին մերոյ։ Սա էր աշակերտ Ադրգինէսի, և կըրեաց վս ճշմարտութն բզմ հլծնս (հալածանս), և մքռցւ (մառաքեցաւ) բանիւ և թղթով ընդ դէմ հերձուածողին Պաւղոսի Շամշատացւոյն , և փոխեցաւ ՚ի կեանս բարի մահուամբ։ Եկաց առաջնորդութն , յամս , իը ։ Ապա Կղեմէս եպս, սա յետ, ժե, ամ կոչելոյ զեկեղեցին, նահատակեցաւ ՚ի ժմկս (ժամանակս) Դիոկղետիանոսի Կայսեր Հռովմայեցոց, ՚ի Լիւսիոս դքսէն, Ապա զկնի սորին յաջորդեաց սբն Ղևոնդ, որ ըղլուսաւորիչ Հայրն մեր ձեռնադրեաց Մբք—նոս և Բհանդպետ Տանս Հայոց։ և եկաց սա ՚ի բզւմ ամս խղղութբ և փառօք մինչև ՚ի սբ ժողովն Նիկիոյ, որ եղև հրամանաւ մեծի Կայսեր Կոստանդիանոսի, և զկնի ժողովոյն վախճանեցաւ սրբութբ կալրել զհօտ իւր իբր յամս, լգ։ Զկնի սորա յաջորդեաց Պուկիանոս կամ Յղիւկիանոս , որ գրեաց բզւմ պիտանի ճառս Եկղցւյ։ Սա կացեալ յաթոռ իւր իբր յամս, Ժբ։ Սորա յաջորդեաց Տիանէոս կամ Գրինէսիոս յամս, իե, զկնի սորին , Եւսեբիոս որ զսբն Ներսէս ձեռնադրեաց, սա կացեալ յաթոռ իւր սրբութբ, իբր յամս ԺԹ։ յետ սորա յաջորդեաց սբն Բարսեղ, որ ՚ի նոյն Կեսարիոյ գաւառաց ծընեալ էր։ Սա երջանիկ և արդիւնաւոր գտաւ ՚ի սբ Հայրս, զի բզւմ ճառս և կանոնս գրեաց, և բարւոք կառավարեալ զԵկեղեցին Բսի, փոխեցաւ առ ցանկալին և յոյն բնաւից Բս ։ Կացեալ ՚ի Հայրպետութեան յամս, ։ Ապա Եղագիոս եպս որ գրեաց զվարս սբյն Բասիլիոսի Աղդպատին իւրոյ։ Սա կացեալ ՚ի յաթոռ իւր իբր յամս, Ժե։ և վճարեաց զկեանս իւր։ ( Փիրմոս, որ գտաւ յեփեսոսի սբ ժղն ( ժողովն ) ՚ի դատապարտութիւն ամպարշտին Նեստորի։ ասեն թէ սա զկնի Եղագիոսի յաջորդեաց։1) Նոյն Բսի յուսոյն մերոյ փառք յտնս։ Ահա այսքան սակաւուք բաւեսցի, և զիս յիշելոյ մի՛ դանդաղիր ով ընթերցաւղ, աղաչեմ։ ։ Թվն ։ չհթ ։

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅՈՑ ՄԸՑՐԵՐՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ ՄԷԿ ԽՈՐՀՈՒՐԴ.

(Շարունակութիւն . տես . երես . 92)

Դժուար է պատժոյ համար հաստատ կանոններ սահմանել . վասն զի պէտք կըլինէր նախ՝ առանձին գրքոյկ կազմել և երկրորդ՝ ամէն երկրի կլիմայի և բնակչաց

---

(1) փակագծներումն նշանակեալ՝ Փիրմոս և այլն տողերը օրինակին լուսանցը գրուած էին